

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Նոր Կեսարիա համայնքի

Ղեկավարի 2012 թ-ի տարեկան

Ես՝ որպես Նոր Կեսարիա համայնքի ղեկավար, ներկայացնում եմ 2012 թ-ի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարման համար սահմանված կարգով կատարվել է հսկողություն:

Համայնքի բոլոր փողոցներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր Տարվա առիթով կազմակերպվել է Ձմեռ պապու հանդիպում բնակիչների հետ և 1-ից մինչև 10 տարեկան երեխաներին բաժանվել է նվերներ, իսկ համայնքի բնակչության համար կազմակերպվել է հյուրասիրություն:

Մայիսի 9-ին հաղթանակի օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ պարզևատրումներ է հանձնվել հայրենական պատերազմի վետերաններին, ինչպես նաև արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին:

Ավագանու հաստատմամբ սոցիալական օգնություն է տրվել գյուղի անապահով ընտանիքներին, 2012 թվականի նոր ծնված երեխաներին և միակողմանի ծնողազուրկ երեխաներին:

Կանաչ միամսյակին նվիրված միջոցառմանը դպրոցի ողջ անձնակազմին բաժանվել է նվերներ և կազմակերպվել է հյուրասիրություն:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ամբողջ գյուղի երեխաներին բաժանվել է նվերներ:

Մայիսի 28-ին անկախության օրվա կապակցությամբ Սարդարապատի հուշահամալիրում կազմակերպվել ենք հյուրասիրություն:

Սպորտի և երիտասարդության զարգացման հարցում մեծ աջակցություն են ցուցաբերել:

2012թ-ի ընթացքում համայնքում կատարվել են բավականին աշխատանքներ կուճուճալ ծառայությունների բնագավառում:

Վերանորոգվել է խմելու ջրի 110 գծամետր վթարային ջրագիծը ինչպես նաև կատարվել է խմելու ջրի խորքային հորի պոմպի վերանորոգման աշխատանքներ:

Կազմակերպվել է և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-անգամ շաբաթական 1 օր:

Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխատանքներ:

Աշխատանքներ են կատարվել համայնքում ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար:

Սեպտեմբերի մեկին առաջին դասարանի երեխաներին նվիրել ենք պայուսակներ և գրենական պիտույքներ:

Ուսուցիչների տոնի կապակցությամբ մշակույթի տանը մեծ շուքով կազմակերպել ենք միջոցառում և բաժանել ենք նվերներ:

Բնակչության շրջանում տարվել է բացատրական աշխատանք հողի հարկերի և գույքահարկերի պարտքերի հավաքագրման վերաբերյալ:

Միաժամանակ բնակչությանը բաժանվել է հիշեցման թերթիկներ իրենց պարտքերի մասին:

Առ. 31.12.2012թ-ի դրությամբ բյուջեն կատարվել է 112%-ով

հողի հարկ-----4725.0

գույքահարկ-----1414.0

վարձակալական հողերի

վարձ----- 9735.8

կատարողական-----6040.09

կատարողական-----1167.88

կատարողական-----10651.72

ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Հ.ԳԱԼՍՏՅԱՆ